

ԿԿՈՒ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



ԹԻՒ 10
ՄԱՐՏ Ա. 2019

Ծերունիները իրենց կարգին կը միանային այս կամ այն խումբին «թոփ խաղալու»: Երիտասարդները «սուրմագլի» կամ «կունդի» կը խաղային:
Տոնին անբաժան մասն էին ժողովրդական ներկայացումներն ու դիմակաւոր խաղերը: Ներկայացումներու ժամանակ ծիծաղախառն կատակներով կը քննադատէին մեծաւորներն ու իշխանութիւնները: Մեծ ու փոքր կը հաւաքուէին եւ պետական ու եկեղեցական օրէնքները մէկ կողմ դրած ամեն մարդ առանց քաշուելու իր խօսքը կ'ըսէ:

Բուն Բարեկենդանը հայ ժողովուրդի հնագոյն տօներն մէկն է եւ կը կշուի Չատիկէն եօթը շաբաթ առաջ: Պահքերու նախորդ օրերը կը կոչուին Բարեկենդան, իսկ Մեծ Պահքին կը նախորդէ Բուն Բարեկենդանը:
Անցեալին Բարեկենդանի առիթով կը կազմակերպուէին ընտանեկան խրախճանքներ՝ առատ ուտելիք, կերուխում:

Տանտիկիները իրենց պահած մթերքներով շաշլօրէն կը հիւրասիրէին ընտանիքին անդամները եւ հիւրերը:

Երկու-երեք օր առաջ կիներ եւ տղամարդիկ կը դադրեցնէին իրենց գործերը, խաղեր կը կազմակերպէին թէ՛ մեծերու եւ թէ՛ փոքրերու հետ:

«ՇՆՈՐՀԱՒՈՐ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, ԲԱՐՈՎ ՀԱՍՆԻՆՔ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ»

Փաստօրէն Բուն Բարեկենդանը, բացի խրախճանքէն, կերուխումէն, նաեւ ազատութեան օր էր:

Ընդհանուր առմամբ, դիմակի գործածութիւնը, սրախաղը, ձիարշաւը եւ խրախճանքները կը յատկանշէին Բարեկենդանը:

Գիւղերու մէջ բացօթեայ խաղեր կը կազմակերպուէին հրապարակներուն կամ տանիքներուն վրայ: Բուն Բարեկենդանին պատանիներն ու երիտասարդները կը ծպտուէին տարբեր ձևերով, կը մրոտէին իրենց երեսը, նաեւ պարապ խխունջներով շինուած վզնոցներ կ'անցնէին իրենց վիզէն: Իւրաքանչիւր շարժումի հետ վզնոցները ծնծղայի պէս կը հնչէին եւ հաճոյք կը պատճառէին:

Բուն Բարեկենդանով վերջ կը տրուի ուտելիքի շաշլուրէան եւ ծայր կ'առնէ Մեծ Պահքը:



ՏՈՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՎ՝ ՈՒՌԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻՔԵԱՆ
ՆԿԱՐԱՉԱՐՈՒՄԵՎ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՒՇԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ուսուցիչը այն էակն է, որ մեզ կը զարգացնէ բազմաթիւ գիտելիքներով եւ անոնցմով զինուած կը կերտենք մեր ապագան:

Մենք ամէն օր եօթը դասապահ կ'ունենանք իսկ ճաբաթ եւ Կիրակի օրերը արձակուրդ ենք: Այս եօթը պահերու ընթացքին չորս լեզուներ կը սորվինք մեր մայրենի լեզուն, անգլերէն, ֆրանսերէն եւ արաբերէն նաեւ զանազան գիտական նիւթեր:

Ուսուցիչը մեր սիրոյ, կրթութեան եւ գիտելիքներու աղբիւրն է, դպրոցը մեր երկրորդ տունն է, իսկ ուսուցչուհին մեր երկրորդ մայրը:

Նարեկ Ապաճեան
Է. կարգ
Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարան

ՈՐՈՇՈՒՄՍ

Ներկայիս բոլորը իրենց հեռաձայններուն եւ համակարգիչներուն աւելի կարելորութիւն կու տան քան իրենց դասերուն եւ պարտականութիւններուն: Շրջան մը առաջ ես ալ հետաքրքրուած էի բջիջային հեռաձայնով, համացանցով եւ շատ ժամանակ կը վատնէի անոնցմով:

- Սերլի՛, աղջի՛կս, պարապ տեղ ժամանակ մի՛ վատներ:
- Է՛, մա՛մ, ամառ է դաս դպրոց չկայ, հանգիստ պիտի ընեմ:
- Այլեւս մոլութիւն եղած է, քիչ մը ձգէ ասոնք, ետքը դասի ժամանակ ի՞նչ պիտի ընես:
- Բան մը կ'ընեմ, մամա՛:
- Ասոնց տեղը գիրք կարդա՛, գիտելիքներ հաւաքէ՛:

Մայրս գրաւեց բջիջային հեռաձայնս, անդրադարձայ, թէ մօրս ըսածը ճիշդ էր, ժամանակի ընթացքին վարժուեցայ առանց հեռաձայնի մնալ եւ հիմա արդէն կարելորութիւն չեմ տար հեռաձայնիս, նոյնիսկ ազատ ժամերուս գիրք կարդալով նորանոր գիտելիքներու կը ծանօթանամ ու ինքզինքս կը զարգացնեմ:

Սերլի Պետրոսեան
Ը. կարգ
Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարան

ՄՕՐԱ ԱՆՍԱՅՄԱՆ ՍԷՐԸ

Մայրս բոլոր մայրերուն նման հոգ կը տանի դաստիարակութեանս եւ վարք ու բարքիս: Ան շատ մտահոգուած է դասերովս:

Ան կ'ըսէ.

- Սարգի՛ս, դասերդ պատրաստէ՛, բաւական է հանգիստդ:
- Մա՛մ, քիչ մըն ալ դադար առնեմ, յետոյ կը սորվիմ: Բայց ես կը մերժեմ դաս սորվիլ ու տարբեր գործերով կը զբաղուիմ:

Մօրս համբերութիւնը կը հատնի ու ան պայուսակս բանալով գիրքերս կը հանէ ու կը ստիպէ որ սորվիմ:


Մօրս փափաքն է, որ ես զարգացած, բարձր վկայականներու արժանացած անձ մը ըլլամ:

Իրաւունք ունի մայրս, որովհետեւ այս դարուս առանց ուսումի եւ գիտութեան մարդ ոչինչ կ'արժէ:

Սարգիս Կիրակոսեան
Ը. կարգ
Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարան



Փորձէ՛ գտնել ծովափ հասցնող ճամբան



Գտի՛ր իրարու նմանող երկու կերպարները:



Ներկէ՛ նախասիրած գոյներովդ:

ՎԱՐԱԳԻՆ ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐԸ

Ուսուցչուհին կը շարունակէ. «Գիտե՞ք, փոքրիկնե՛ր, հա-
յերը նախապէս այբուբենն չունէին, անոնք օտար լեզուներով
կը կարդային ու կը գրէին: Հայ մանուկներուն համար
շատ դժուար կ'ըլլար օտար լեզու սորվիլ: Հայ բարի եւ
խելացի վարդապետ մը՝ Մեսրոպ Մաշտոց, կ'որոշէ օգնել
հայերուն, կը հնարէ այբուբենը, կը բանայ հայկական դրա-
րոցներ եւ այբուբենը կը սորվեցնէ աշակերտներուն:

Մեսրոպ կ'ըսէ. «Օ՛հ, շնորհիւ ինծի մենք հայերէն
կը կարդանք ու կը գրենք»:

Գօգօն կը հարցնէ. «Իմ ան՞ուն, օրի՞որդ»:

Ուսուցչուհին ժպտելով կ'ըսէ. «Հայերը առաջին քրիս-
տոնեայ ժողովուրդն են: Գրիգոր Լուսաւորիչ ինքն էր, որ
հայերը քրիստոնեայ դարձուց: Գրիգորի նման՝ հայերը ու-
նին այլ սուրբեր, ինչպէս՝ Սարգիս, Կարապետ, Յակոբ:
Այս բոլոր սուրբերը աշխատեցան, որ մենք քրիստոնեայ
մնանք»:

Աշակերտները միասին կը խաչակնքեն:

Ուսուցչուհին կը շարունակէ.

- Հայկական իւրաքանչիւր անուն ունի իր
իմաստը, ինչպէս՝ Հրակ, այսինքն՝ կրակէ աչք,
Արի՛ քաջ, Կորին՝ առիծի ձագ, Ռազմիկ՝ զի-
նուոր:

Դասարանին մէջ բոլոր տղաքը ուրախ
էին, չէ որ իրենց անունները յիշած էր ուսուցչուհին, միայն
Վարագ անկիւն մը նստած, տխուր էր, որովհետեւ իր անու-
նը յիշուած չէր: Ուսուցչուհին մօտենալով անոր կ'ըսէ.

- Վանի շրջանի բարձունքներուն՝ Վարագայ լեռան
վրայ, Վարագայ վանքին մէջ, տարիներ առաջ լոյս մը
կը ծագի եւ սուրբ խաչը կ'երեւի: Այդտեղ պահուած կը գտնեն
Յիսուսի խաչափայտէն կտոր մը:

Վարագ ուրախութեամբ կ'ըսէ. «Երբ պատմական Հա-
յաստան երթամ, անպայման կ'ուզեմ այցելել Վարագայ
լեռը եւ վանքը»:

Չանգը կը հնչէ, Վարագ եւ դասընկերները բակ կ'ելլեն
ուրախ եւ հպարտ, անելի գօտեպնդուած իրենց կրած հայ
հերոսներուն եւ սուրբերուն անուններով ու
կը բացագանչեն բարձրաձայն՝ ՀԱՅ
ԵՆՔ ՄԵՆՔ...:

(Վերջ)



ԾԱՆՕԹ ԷՔ ԱՎԼԱՏԻՉԻՆ

Գիւղին հրապարակը տեղի կ'ունենար ձիարշաւ, որ կ'աւարտեր «Ուտիս տատին» վճռուելու եւ «Պաս պապին» հրաւիրելու ծեսով: «Ուտիս տատը», որ Բարեկենդանի օրերուն բոլորը ուտել-խմելու կը հրաւիրեր, այժմ արդէն զգզուած տիկնիկ է: Բարեկենդանի վերջին օրը, երեկոյեան հանդիսաւոր կերպով կը գլորի լեռան գագաթէն՝ երիտասարդներուն բարեկենդանեան վերջին խնճոյքը հովանաւորելէ ետք: Անոր կու գար փոխարինելու «Պաս պապի» կամ «Ակլատիգ»ը:

Ակլատիգը պատրաստուած կ'ըլլար սոխէ, վրան եօթը փետուր եւ թելով առաստաղէն կախուած: Չայն առաստաղէն կախելու ատեն կ'երգէին:

*Տատը զնաց շերեփը ձեռքին,
Պապը եկաւ չոմբախն ուսին:*

Կարնոյ մէջ այդ տիկնիկը ծերունիի տեսքով էր: Կը պատրաստուէր տղամարդու հագուստով, փարթամ ու սպիտակ պէս ու մօրուքով, միոտանի, որու ծայրը կը խրէին սոխը՝ եօթը փետուրներով, պարզած թելերով, որոնցմէ քարեր կը կախուէին: Չայն կախելու ժամանակ մանուկները կ'երգէին:

*Ակլատիգ, չուանը վիզ
Եկաւ մեզ հիր՝ կախուաւ երդիս:*

Եօթը փետուրները, որոնք Մեծ Պահքի եօթը շաբաթներուն կը համապատասխանէին, օրացոյցի դեր կը կատարէին, իւրաքանչիւր շաբաթուան վերջը մէկ փետուր կը վերցնէին:

Այնթապցիները, որոնք փետրազարդ սոխը կը կոչէին, խուճուճիկ, Մեծ Պահքի վերջին օրը գայն կը թաթխէին:

մածունի մէջ եւ կը նետէին տանիքը: Ըստ անոնց պատկերացումներուն, սոխը կը վերածուէր մկաններու, խոխը՝ թելերու, ինքը՝ խուճուճիկն ամբողջութեամբ՝ թռչունի, որ կը թռչէր կ'երթար՝ յաջորդ տարին վերադառնալու պայմանով: Մեծ Պահքի առաջին օրը ամեն տուն կը թխէին եօթը հատ անլի բաղարջ՝ ի նշան պահքի եօթը շաբաթներուն: Պահքի ընթացքին կենդանական ծագում ունեցող սնունդ չէին ուտեր, այլ միայն բուսական:

Հայ եկեղեցւոյ մէջ, Բուն Բարեկենդանի նախորդող օրը՝ Շաբաթ երեկոյեան, ժամերգութեան ընթացքին եկեղեցւոյ խորանի վարագոյրը կը քաշուի, խորանը կը ծածկուի, եւ այնպէս փակ կը մնայ քառասնօրեայ պահքի շրջանին:

Պահքի ժամանակ կը մատուցուի փակ պատարագ: Պսակի խորհուրդը տեղի չ'ունենար, կ'արգիլուի մատաղ ընել, մինչ կը թոյլատրուի մկրտութիւն եւ նշանտուք կատարել: Մեծ Պահքի (պաս) իւրաքանչիւր Կիրակին ունի իր անունը:

Առաջին Կիրակին նուիրուած է Արտաքսման, երկրորդը՝ Անառակին, երրորդը՝ Տնտեսին, չորրորդը՝ Դատաւորին, հինգերորդը՝ Գալստեան, վեցերորդը՝ Ծաղկազարդին եւ եօթերորդը՝ Քրիստոսի Յարութեան:

